

րով ու չորս ցած ոտներով (Գար. Ա, 1556-7). եւ ըստ Ս. Գրոց՝ իւր վրայ կը դրուէր ուրիշ անօթ, եւ կամ միս կը խորովուէր: Այս է ըստ իս բնիկ ու միակ իմաստը հայ «կասկարայից», յայտնինաեւ յոգնակի ձեւէն՝ ձողերուն պատճառաւ, եւ Ոսկեբերանի սա բացատրութենէն՝ թէ «Ոչ որ ի զօրականաց արկ զմեզ ի խարոյկ եւ կացոյց ի վերայ կասկարայից» (Թղթ. Բ, 439). ակնարկութիւն ծանօթ կասկարային՝ որ վկայից տանջանարան եղաւ: Այս գործին սովորաբար կը զետեղուէր կրակարանին կամ թոնդրուքին բերանը:

Կարսայ: Կը գրուի նաեւ կատսայ (վեցօր. 79,80), եւ ծագած է ասոր. կադսս (ի յն. *καδσς*) հոմանշէն (Հիւրշ. 306): Խոհանոցի անօթոց մեծագոյնն էր եւ պղնձեղէն, որով միս կ'եփէին (Բ Մնաց. 15, 13. Ա Եզր, Ա, 12, եւն): Ս. Գրոց մէջ կը զուգադիպի յուն. զանազան բառից, որոց ձեւերը դիւրին չէ ճշդել: Բայց վիգուրու յառաջ կը բերէ եգիպտական խոհանոցի պատկերներ (Բ, 1147), որոց մէջ կը գտնենք շատ անօթներ: Հոն կան եւ կաթսայք, որոց լայնութիւնն աւելի է քան խորութիւնը. ունին հարթ ու թեթեւակի դէպ ի ներս շեղած կողեր, փոքր ինչ գոգաւոր յատակ, եւ երիզանման շուրթն: